



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

6 ապրիլի 2017 թվականի N 14

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման ապահովմանն ուղղված 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրին (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրի կատարող հանդիսացող հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել ծրագրի կետերի կատարման համար նախատեսվող անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ առաջարկություններ:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ծրագրում ներառված միջոցառումների իրականացման ֆինանսավորման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության շահագրգիռ պետական կառավարման մարմինների կողմից սահմանված կարգով ներկայացված հայտերի առկայության դեպքում:

4. Ծրագրի կատարող հանդիսացող հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ եռամսյա պարբերականությամբ՝ ծրագրի իրականացման ընթացքը դիտարկող համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացնել հաշվետվություն իրենց կողմից իրականացված միջոցառումների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2017 թ. ապրիլի 11
Երևան



ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ
 ՈՒՂՂՎԱԾ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ						
Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման ցուցիչը	Կատարման ժամկետը	Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը	
Օրենսդրական ոլորտ						
1.1.	Մշակել և հաստատել ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ գորքերի սահմանային վերահսկողության ոլորտում ներգրավված ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող իրավական ակտ:	ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ գորքերի սահմանային վերահսկողության ոլորտում ներգրավված ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող իրավական ակտը մշակվել և հաստատվել է:	Իրավական ակտերում փոփոխությունների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում:	2019	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.2.	Բարելավել պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի յուրաքանչյուր մարմնի կենտրոնական ապարատի և պետական սահմանի պահպանության գործում ներգրավված համապատասխան ստորաբաժանման միջև, վերջինիս և նշված մարմնի այլ ծառայությունների միջև, միևնույն ստորաբաժանման միավորների միջև, ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների միավորների միջև համագործակցությունը, լրամշակել նրանց լիազորությունները սահմանող իրավական ակտերը:	Բարելավված են պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի յուրաքանչյուր մարմնի կենտրոնական ապարատի և պետական սահմանի պահպանության գործում ներգրավված համապատասխան ստորաբաժանման միջև, վերջինիս և նշված մարմնի այլ ծառայությունների միջև, միևնույն ստորաբաժանման միավորների միջև, ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների միավորների միջև համագործակցությունը, լրամշակված են նրանց	Իրավական ակտերում փոփոխությունների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում:	2019	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

		լիազորությունները սահմանող իրավական ակտերը:				
1.3.	Իրականացնել պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի մարմինների, դրանց առանձին ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող ակտերի՝ պետական սահմանի համալիր կառավարմանը վերաբերող դրույթների համալիր ուսումնասիրություն և դրանք համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության և օրենքների (ԵԱՏՄ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտեր, ՀՀ օրենքը «Պետական սահմանի մասին» և այլն) պահանջներին, վերացնել հակասությունները:	Պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի մարմինների, դրանց ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող ակտերը համապատասխանեցված են ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին, վերացված են իրավական ակտերի միջև հակասությունները:	Կատարված օրենսդրական փոփոխությունների և ընդունված իրավական ակտերի քանակը և նպատակը:	2017-2019	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.4.	Ամբողջական ուսումնասիրության ենթարկել ՀՀ գործող իրավական ակտերը և դրանք համապատասխանեցնել միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոններին և ԵԱՏՄ իրավական ակտերին:	ՀՀ գործող իրավական ակտերը համապատասխանեցված են միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոններին:	Իրավական ակտերում կատարված փոփոխությունների կամ ընդունված իրավական ակտերի քանակն ու նպատակը:	2017-2018	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ գործեր	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

					<p>ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	
1.5.	<p>Մշակել և ընդունել Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների պահանջներին համապատասխան ՀՀ պետական սահմանի անցման կետերում այդ կանոնների պահանջների կատարման և արտակարգ իրավիճակներում հանրային առողջության պահպանմանն ուղղված ծրագրեր և դրանցից բխող գործողությունների պլաններ՝ յուրաքանչյուր սահմանային անցակետի համար:</p>	<p>Ապահովված է միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների պահանջների իրացումը ՀՀ իրավական համակարգում:</p>	<p>Ընդունված ծրագրերի բնույթը և նպատակը:</p>	2017-2019	<p>ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքեր ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>
Ինստիտուցիոնալ ոլորտ						
1.6.	<p>Պետական սահմանի ռեժիմի պահպանման հետ կապված հարցերի լուծման, ինչպես նաև սահմանային միջադեպերի կարգավորման համար գործնականում ապահովել «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ով նախատեսված սահմանային ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծումը և բնականոն գործունեությունը:</p>	<p>«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ՀՀ սահմանային ներկայացուցիչներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը նշանակել է:</p>	<p>Սահմանային ներկայացուցիչների ստեղծման իրականում:</p>	2021	<p>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>

1.7.	Գործնականում ապահովել ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ 783-Ն որոշմամբ նախատեսված հատուկ կացարանների ստեղծումը և բնականոն գործունեությունը «Գյումրի» և «Այրում» պետական սահմանի անցման կետերում:	Հատուկ կացարանների վերաբերյալ դրույթներից բխող միջոցառումներն իրականացված են:	Հատուկ կացարանների ստեղծումն իրականում:	2021	ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքեր ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.8.	ՍԷԿՏ համակարգ մուտքագրվող տվյալների հավաստիությունն ապահովելու և որակը բարելավելու նպատակով մշակել ծրագրային ապահովման միջոցներ, որոնք թույլ կտան շահագործողի կողմից մուտքագրման ժամանակ կրկնակի ստուգումներ անցկացնել և համապատասխան հուշումներ ստանալ: Լրացուցիչ ծրագրային միջոցներով ապահովել սահմանային վերահսկողության ստանդարտ գործառնությունների արագ և արդյունավետ կատարում:	ՍԷԿՏ համակարգ մուտքագրվող տվյալների հավաստիությունն և որակի կատարելագործում: Նախկին մուտքագրված ոչ արժանահավատ տվյալների վերամշակում: Լրացուցիչ ծրագրային միջոցների կիրառում, որոնք օգնում են արագ և արդյունավետ իրականացնել սահմանային գրանցման ընթացքում կատարվող վերահսկողության գործառնությունները	Բարելավել ՍԷԿՏ համակարգը:	2017-2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.9.	Իրականացնել անձանց նույնականացման մեթոդների կատարելագործում՝ մատնահետքերի գրանցում ՍԷԿՏ համակարգում և դրանցով նախկին սահմանահատումների և վիզա հայցողների ստուգում, համապատասխան ծրագրային միջոցի մշակում և փորձնական տարբերակի ներդրում որևէ սահմանակետում: Դեմքի ճանաչման պիլոտային ծրագրի մշակում՝ «Դեմքի որոշում» (Face Detect) և «Դեմքի համեմատում» (Face Compare) տեխնոլոգիաներով: Ուսումնասիրելով առաջադեմ երկրների փորձը՝ գնահատելով առկա ռիսկերը և դրա նպատակահարմարությունից ելնելով ՍԷԿՏ համակարգում ներդնել «էլեկտրոնային դարպաս» ենթահամակարգ՝ ապահովելով կենսաչափական անձնագիր ունեցող ՀՀ քաղաքացիների անձնագրի ստուգում հավաստագրի միջոցով, սահմանային գրանցման ժամանակ դեմքի նկարում և համեմատում անձնագրի նկարի հետ, անհրաժեշտության դեպքում մատնահետքի և նկարի համեմատում ՀՀ Ոստիկանության	Անձանց նույնականացման որակն բարձրացնելու նպատակով մատնահետքերի գրանցում ՍԷԿՏ համակարգում, լրամշակվել է սահմանային գրանցման ծրագրային միջոցը՝ գրանցման ընթացքում իրականացնելով օպերատիվ առաջադրանքների և վիզա հայցողների ստուգումներ: Լրամշակվել է նաև տեղական և միջազգային հետախուզվողների, ինչպես նաև այլ օպերատիվ առաջադրանքներով անցնող անձանց մուտքագրման ծրագրային մոդուլը՝ ապահովելով մատնահետքերի մուտքագրում ՍԷԿՏ համակարգ: Միևնույն բիոմետրիկ տվյալներով՝ մատնահետքերով, տարբեր փաստաթղթերով անձանց	Բարելավել ՍԷԿՏ և այլ տեղեկատվական համակարգերի գործակցում միմյանց հետ:	2017-2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

	<p>ԲՊՈ-ում առկա տվյալների հետ</p>	<p>գրանցվող տվյալների համադրում ՀՀ բնակչության, երկքաղաքացիների և օտարերկրացիների ռեգիստրի տվյալների հետ: Լրամշակվել են հաշվետվությունների և վիճակագրությունների ծրագրային ձևերը: Դեմքի ճանաչման պիլոտային ծրագրի ներդրում: ՀՀ Ոստիկանության ԲՊՈ-ին հասանելիությամբ «Էլեկտրոնային դարպաս» պիլոտային համակարգի ներդրում:</p>				
<p>1.10.</p>	<p>ՍԷԿՏ համակարգի գլխավոր սերվերային հանգույցի հատկային տարբերակի ստեղծում ԱԱԾ վարչական շենքի տարածքից դուրս՝ համալրելով համապատասխան կոմունիկացիոն, սերվերային և տեխնիկական միջոցներով, որը կապահովի ՍԷԿՏ համակարգի. ինչպես նաև սահմանակետերի անխափան աշխատանքը՝ անկախ արտաքին խանգարող գործոններից, կապի խափանումներից, գլխավոր սերվերային հանգույցի գործելուց:</p>	<p>Սահմանակետերում պահուստային պաշտպանված կապուղիներով, անհրաժեշտ ծրագրա-ապարատային միջոցներով՝ կապի խափանումների դեպքում հասանելի կապուղուն վերառողորդելու հնարավորության ապահովում: ՍԷԿՏ համակարգի գլխավոր սերվերային հանգույցի հատկային տարբերակիչահագործում ԱԱԾ վարչական շենքի տարածքից դուրս, որը ապահովում է սահմանակետերի անխափան աշխատանքը: Սերվերային հանգույց համապատասխան պայմաններով ապահովված և կահավորված, համապատասխան կապուղիներով և սարքավորումներով հագեցած:</p>	<p>Բարելավել ՍԷԿՏ համակարգը:</p>	<p>2017-2021</p>	<p>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>
<p>1.11.</p>	<p>Ապահովել սանիտարական կարանտինային բոլոր կետերի առաջին զծում սանիտարական կարանտինային կետերի զննման հատուկ սենյակների ստեղծումը:</p>	<p>Պետական սահմանի անցման բոլոր կետերի առաջին զծում ստեղծված են սանիտարական կարանտինային բոլոր կետերի</p>	<p>Պետական սահմանի անցման բոլոր կետերի և դրանց առաջին զծում ստեղծված սանիտարական</p>	<p>2017</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>

		զննման հատուկ սենյակներ:	կարանտինային կետերի քանակն ու հարաբերակցությունը:		աննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքեր	
1.12.	Անհրաժեշտության դեպքում ռիսկերի վերլուծության, գնահատման և կառավարման ստորաբաժանումներ ստեղծել նաև պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի մյուս մարմինների համակարգում:	Ռիսկերի վերլուծության, գնահատման և կառավարման ստորաբաժանումներ են ստեղծված պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի մյուս մարմինների համակարգում:	Այն մարմինները, որտեղ ստեղծվել են ռիսկերի վերլուծության, գնահատման և կառավարման ստորաբաժանումներ:	2017-2020	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.13.	Ապահովել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը հաշվառման և վերահսկման ենթակա տրանսպորտային միջոցների՝ պետական սահմանի անցման բոլոր կետերով մուտքերի և ելքերի մասին իրական ժամանակում տվյալների ստացման հնարավորություն: Ապահովել մաքսային ձևակերպումից հետո ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության վերահսկողության ներքո գտնվող ապրանքատեսակների վերաբերյալ տվյալների ավտոմատ հաղորդումը TWM համակարգից դեպի ՍԷԿՏ համակարգ:	Ապահովված է սահմանային կառավարման համար կուտակվող տվյալների որակը:	Վերլուծվող սխալների տիպերը և ի հայտ բերվող սխալների քանակը:	2017-2021	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.14.	Ուսումնասիրել պետական սահմանի կառավարման ոլորտի կարիքների համար ֆինանսական միջոցների ծախսման, դրա նկատմամբ վերահսկողության՝ միջազգային, ԵՄ և ԵԱՏՄ չափանիշներին համապատասխանող արդյունավետ համակարգը և անհրաժեշտության դեպքում	Բարձր է յուրաքանչյուր մարմնում պետական սահմանի կառավարման ոլորտի կարիքների համար ֆինանսական միջոցների ծախսման, դրա նկատմամբ վերահսկողության	Ֆինանսական միջոցների ծախսման և դրա նկատմամբ վերահսկողության ներդրված համակարգը, իրավական ակտերում փոփոխությունների կատարում՝ ըստ	2017-2020	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

	միջոցներ ձեռնարկել այն ՀՀ համապատասխան մարմիններում ներդնելու ուղղությամբ:	արդյունավետությունը:	անհրաժեշտության:		ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	
1.15.	Ջարգացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության՝ սննդի հետազոտման լաբորատոր կարողությունները, այդ ոլորտի գիտական, ինչպես նաև սննդի անվտանգության ոլորտում ռիսկերի կառավարման և գնահատման կարողությունները:	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության՝ սննդի հետազոտման լաբորատոր կարողությունները, այդ ոլորտի գիտական, ինչպես նաև սննդի անվտանգության ոլորտում ռիսկերի կառավարման և գնահատման կարողությունները զարգացած են:	Նշված կարողությունների զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:	2017-2020	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.16.	«Էրեբունի» ՀԱԿ-ում և «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի Կարգո տերմինալում ապահովել ՍԷԿՏ համակարգի սահմանային գրանցումների աշխատատեղերի ներդրում:	«Էրեբունի» ՀԱԿ-ում և «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի Կարգո տերմինալում տեղադրված են ՍԷԿՏ համակարգի սահմանային գրանցումների աշխատատեղեր, որոնք ապահովված են կոմունիկացիոն, սերվերային և տեխնիկական միջոցներով:	Բարելավել ՍԷԿՏ համակարգը:	2017-2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
Ընթացակարգեր						
1.17.	Հայ-վրացական պետական սահմանում սահմանային ծառայությունը առավելագույնս սահմանագծին մոտ կազմակերպելու և Հայաստանի Հանրապետության տարածքի՝ ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջանակները որոշելու նպատակով միակողմանի կատարել պետական սահմանի տեղորոշում 1: 50 000 մասշտաբի տեղագրական քարտեզների համապատասխան:	Հայ-վրացական պետական սահմանում Հայաստանի Հանրապետության տարածքի՝ ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջանակները միակողմանի որոշված են, սահմանային ծառայությունը կազմակերպվում է առավելագույնս	Սահմանագծի ճշգրիտ իմացության բարձր մակարդակը	2021	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գեոդեզիայի և քարտեզագրության ՊՈԱԿ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

		սահմանագծին մոտ 1:50 000 մասշտաբի տեղագրական քարտեզների համապատասխան:				
1.18.	Համապատասխան ֆինանսավորման առկայության պարագայում Երևանի «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների մաքսային ընթացակարգերի արդիականացում և ԵՄ ու ԵԱՏՄ չափանիշներին համապատասխանեցում:	Երևանի «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների մաքսային ընթացակարգերը արդիականացված են և եվրոպական չափանիշներին համապատասխանեցված	Իրավական ակտերում փոփոխությունների կատարում, արդիականացված ընթացակարգերը, դրանց բնույթը:	2017-2020	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
Անձնակազմի պատրաստում և վերապատրաստում						
1.19.	ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքերի զինծառայողների, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպել դասընթացներ՝ կապված «Օտարերկրացիների մասին», «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված նրանց լիազորությունների իրացման կառուցակարգերի հետ:	ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքերի զինծառայողները, ՀՀ ԿԱ Ոստիկանության աշխատակիցները տեղեկացված են «Օտարերկրացիների մասին», «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված նրանց լիազորությունների մասին:	Կազմակերպված դասընթացների և դրանց մասնակցած ունկնդիրների քանակը:	2021	ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.20.	Ներգերատեսչական մակարդակում ապահովել պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի մարմինների համապատասխան անձնակազմերի պատշաճ իրազեկումը սույն ծրագրով նախատեսված միջոցառումների մասին:	Ներգերատեսչական մակարդակում պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի մարմինների անձնակազմերը պատշաճ տեղեկացված են սույն ծրագրի դրույթների մասին:	Շահագրգիռ մարմինների այն աշխատակիցների քանակը և զբաղեցրած պաշտոնը, որոնք տեղեկացվել են սույն ծրագրով նախատեսված միջոցառումների մասին:	2017-2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

					<p>Նախարարություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	
1.21.	<p>Մշակել և ընդունել սանիտարական կարանտինային կետերի և պետական սահմանի անցման կետերում գործող մարմինների աշխատակիցների համար նախատեսված միջազգային առողջապահական կանոնների վերաբերյալ կրթական ծրագրեր և մեթոդական ուղեցույցներ, կազմակերպել աշխատակիցների գործուղումներ ԵԱՏՄ և ԵՄ կառույցներ վերապատրաստում անցելու համար:</p>	<p>Սանիտարական կարանտինային կետերի և պետական սահմանի անցման կետերում գործող մարմինների աշխատակիցները տեղեկացված են միջազգային առողջապահական կանոնների մասին:</p>	<p>Կրթական ծրագրերի և մեթոդական ուղեցույցների քանակը, կոնկրետ ուղղվածությունը:</p>	2017-2020	<p>ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>
Կապ և տեղեկատվության փոխանակում						
1.22	<p>Մշտապես միջոցներ ձեռնարկել պետական սահմանի անցման կետերում հանրային առողջապահական ռիսկերի, վտանգավոր գործոնների, վարակիչ հիվանդությունների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման ուղղությամբ:</p>	<p>Հասարակությունը մշտապես տեղեկացված է պետական սահմանի անցման կետերում հանրային առողջապահական ռիսկերի, վտանգավոր գործոնների, վարակիչ հիվանդությունների մասին:</p>	<p>Հասարակությանը տրամադրված իրազեկումների քանակը և նպատակը:</p>	2017-2021	<p>ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>
1.23.	<p>Իրականացնել ՍԷԿՏ համակարգի տեխնիկական միջոցների ամբողջական</p>	<p>ՍԷԿՏ համակարգի տեխնիկական միջոցները</p>	<p>ՍԷԿՏ համակարգում փոփոխությունների քանակը և</p>	2017-2020	<p>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>

	արդիականացում և նախատեսել ՍԷԿՏ համակարգի մշտական զարգացումը:	ամբողջովին արդիականացված են, ապահովված է ՍԷԿՏ համակարգի մշտական զարգացումը:	բնույթը:		ծառայություն	
Ենթակառուցվածքներ և սարքավորումներ						
1.24.	Շարունակական ծրագրերով իրականացնել սահմանապահ զորքերի զինծառայողների բնակարանային կարիքների ապահովում և բնակարանային պայմանների բարելավում:	Բավարարված են սահմանապահ զորքերի զինծառայողների բնակարանային կարիքները, նրանց բնակարանային պայմանները բարելավված են:	Սահմանապահ զորքերի զինծառայողների քանակը, որոնց բնակարանային կարիքները բավարարվել են կամ բարելավվել են բնակարանային պայմանները:	2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.25.	Հայ-վրացական պետական սահմանում «Դեբեդավան» և «Բագրատաշեն» սահմանապահ ուղեկալների կառուցում:	Հայ-վրացական պետական սահմանում կառուցված են 2 ուղեկալներ, բարձր է ՀՀ պետական սահմանի կառավարման արդյունավետությունը:	Կառուցված ուղեկալները:	2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.26.	Պետական սահմանը համալրել դրա պահպանության համար անհրաժեշտ ազդանշանային և դիտարկման համակարգերով (այդ թվում՝ գիշերային ժամերին պետական սահմանի պահպանության համար նախատեսված լուսարձակման համակարգերով), տեխնիկական և տրանսպորտային միջոցներով, հեռավոր շրջաններում վիզուալ հսկողության, հեռահար պարեկության օպերատիվ աջակցության համար անհրաժեշտ համակարգերով:	Պետական սահմանը համալրված է դրա պահպանության համար անհրաժեշտ սարքավորումներով ու տեխնիկական միջոցներով:	Պետական սահմանը համալրած սարքավորումների ու տեխնիկական միջոցների քանակը, դրանց բնույթը, ինչպես նաև ապօրինի սահմանահատումներն ու դրանց քանակը:	2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.27.	Պարբերաբար թարմացնել պետական սահմանի անցման կետերում շահագործվող սահմանային վերահսկողության և այլ տեխնիկական միջոցները:	Պետական սահմանի անցման կետերում շահագործվող սահմանային վերահսկողության և այլ տեխնիկական միջոցները թարմացվել են:	Պետական սահմանի անցման կետերը համալրած սարքավորումների ու տեխնիկական միջոցների քանակը:	2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.28	Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 12-ի թիվ 735-Ն որոշման, անցման կետերում ՀՀ ԱԱԾ ՍՔ հսկիչ անցագրային կետերը պետական սահմանի անցման կետերի ռեժիմը պահպանելու նպատակով ապահովել ժամանակավոր և մշտական անցագրերի տրամադրումը:	Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 12-ի թիվ 735-Ն որոշման, անցման կետերում ՀՀ ԱԱԾ ՍՔ հսկիչ անցագրային կետերը պետական սահմանի անցման կետերի ռեժիմը պահպանելու նպատակով ապահովվեց են	ՀՀ ԱԱԾ ՍՔ հսկիչ անցագրային կետեր ընդհանուր և մշտական անցագրերի քանակը:	2018	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

		ժամանակավոր և մշտական անցագրերով:				
1.29.	Գործնականում ապահովել ՀՀ բոլոր մաքսատներում կամ մաքսային կետերում ԵԱՏՄ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերով նախատեսված անձանց քննման համար սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող մեկուսացված սենյակների ստեղծումը:	ԵԱՏՄ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի՝ ՀՀ բոլոր մաքսատներում կամ մաքսային կետերում քննման համար սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող մեկուսացված սենյակներ ստեղծելու վերաբերյալ պահանջները կատարված են:	ՀՀ մաքսատների կամ մաքսային կետերի քանակը, դրանցից յուրաքանչյուրում քննման համար սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող մեկուսացված սենյակների առկայությունն իրականում:	2017-2018	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
1.30.	Ներդնել պետական սահմանը հատող ավտոմեքենաների հաշվառման համարանիշներն ավտոմատ կարդացող սարքեր և իրականացնել տրանսպորտային միջոցի լուսանկարահանում և սահմանահատման փաստի ձևակերպման տեսալուսանկարահանում:	ՀՀ մուտք գործած և մեկնած ավտոմեքենաները և այլ շարժական սարքերը հստակեցված են՝ բարելավելով հետախուզման և միջոցառումների անցկացման և մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետությունը և պետական սահմանի անցման բոլոր կետերում գործող մարմինների աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը էթիկայի կանոններին և նրանց բարեկիրթ վերաբերմունքը սահմանը հատող անձանց նկատմամբ:	ՍԷԿՏ համակարգում կուտակվող տվյալների բարձր որակը:	2017-2018	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

2. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման ցուցիչը	Կատարման ժամկետը	Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
Օրենսդրական ոլորտ					
2.1.	Մշակել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել ՀՀ մուտքի թույլտվություն չստացած և արտաքսման կամ ետ վերադարձման ենթակա օտարերկրացիների ՀՀ օդանավակայաններից փոխադրման, իսկ	ՀՀ մուտքի թույլտվություն չստացած և արտաքսման կամ ետ վերադարձման ենթակա օտարերկրացիների ՀՀ օդանավակայաններից	Նոր իրավական ակտերի ընդունում:	2018	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն

	ավտոմոբիլային և երկաթուղային անցման կետերով նրանց հանձնման կարգը:	փոխադրման, իսկ ավտոմոբիլային և երկաթուղային անցման կետերով նրանց հանձնման կարգը մշակվել և ընդունվել է:			ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	
2.2.	Իրականացնել պետական սահմանի համալիր կառավարման ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծություն և անհրաժեշտության դեպքում ներկայացնել դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ՝ հաշվի առնելով այս ոլորտի միջազգային, այդ թվում ԵԱՏՄ և ԵՄ չափանիշները:	Պետական սահմանի համալիր կառավարման ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերը համապատասխանեցված են այս ոլորտի միջազգային և ԵՄ չափանիշներին:	Իրավական ակտերում կատարված փոփոխությունների կամ ընդունված իրավական ակտերի քանակը և նպատակը:	2017-2021	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ ԿԱ պետական եկամտունների կոմիտե ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքեր ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
2.3.	Վիզաների տրամադրման ընթացակարգը սահմանող ՀՀ իրավական ակտերում կատարել փոփոխություններ՝ հաշվի առնելով պետական սահմանի համալիր կառավարման «մեկ պատուհան» կամ «մեկ կանգառ» սկզբունքի պահանջները:	Վիզաների տրամադրման ընթացակարգը սահմանող ՀՀ իրավական ակտերը համապատասխանեցված են պետական սահմանի համալիր կառավարման «մեկ պատուհան» կամ «մեկ կանգառ» սկզբունքի	Իրավական ակտերում փոփոխությունների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում:	2017	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

		պահանջներին				
2.4.	Վերլուծել միջազգային օրենսդրությունը, այդ թվում՝ ԵՄ և ԵԱՏՄ չափանիշներին համապատասխանելիության տեսանկյունից և ներկայացնել առաջարկություններ օտարերկրացիների վերաբերյալ ՀՀ օրենսդրության լրամշակման անհրաժեշտության վերաբերյալ:	Օտարերկրացիների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցված է միջազգային և ԵՄ չափանիշներին:	Իրավական ակտերում փոփոխությունների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում:	2017-2019	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
2.5.	Մշակել կեղծ փաստաթղթերի, այդ թվում՝ անձնագրերի, ճամփորդական այլ փաստաթղթերի հայտնաբերման և ստուգման կանոններ, արդիականացնել փաստաթղթերի նույնականացման առկա մեթոդներն ու տեխնոլոգիաները:	Կեղծ փաստաթղթերի, այդ թվում՝ անձնագրերի, ճամփորդական այլ փաստաթղթերի հայտնաբերման և ստուգման կանոնների մշակում, փաստաթղթերի նույնականացման առկա մեթոդների ու տեխնոլոգիաների արդիականացում:	Իրավական ակտերում փոփոխությունների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում:	2017-2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
2.6.	Սահմանների համալիր կառավարմանը վերաբերող միջազգային, ԵՄ և ԵԱՏՄ չափանիշների ու արդյունավետ փորձի ուսումնասիրության հիման վրա ներկայացնել առաջարկություններ, սանիտարակարանտինային, բուսասանիտարական և անասնաբուժասանիտարական վերահսկողությանը վերաբերող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով «մեկ կանգառ» կամ «մեկ պատուհան» սկզբունքի պահանջները:	Սանիտարակարանտինային, բուսասանիտարական և անասնաբուժասանիտարական վերահսկողությանը վերաբերող օրենսդրությունը համապատասխանեցված է «մեկ կանգառ» կամ «մեկ պատուհան» սկզբունքի պահանջներին:	Իրավական ակտերում փոփոխությունների կատարում կամ նոր իրավական ակտերի ընդունում:	2017-2021	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
2.7.	Հաշվի առնելով ՀՀ պետական սահմանով միջուկային և ռադիոակտիվ նյութերի ապօրինի փոխադրման հնարավոր ռիսկերը և դրանց դեմ արդյունավետ պայքարի	Մշակված և ընդունված են ՀՀ-ում գործող փորձագիտական հիմնարկների համապատասխան	Համապատասխան ծրագրերում փոփոխությունների կատարում կամ նոր ծրագրի ընդունում:	2017-2021	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գիտությունների	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

	անհրաժեշտությունը՝ մշակել և ընդունել փորձագիտական կարողությունների զարգացմանն ուղղված համապատասխան ծրագիր կամ գործող ծրագրերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ:	կարողությունների զարգացմանն ուղղված ծրագիր կամ գործող ծրագրերում կատարված են անհրաժեշտ փոփոխություններ:			ազգային ակադեմիա ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	
Ինստիտուցիոնալ ոլորտ						
2.8.	Մշտապես զարգացնել մաքսային մարմինների և Սահմանապահ զորքերի շնաբուժական կենտրոնների կարողությունները՝ դրանց ծառայությունները պետական սահմանի անցման կետերում նպատակային և արդյունավետ օգտագործելու համար, մշակել նշված կենտրոնների զարգացման պլաններ:	Մաքսային մարմինների և Սահմանապահ զորքերի շնաբուժական կենտրոնների կարողությունները զարգացած են, առկա են դրանց զարգացման համար անհրաժեշտ պլաններ, բարձր է պետական սահմանում հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետությունը:	Յուրաքանչյուր մարմնում առկա շների քանակը և նրանց կողմից տրամադրվող ծառայությունները:	2021	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքեր	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
2.9.	ՍԷԿՏ համակարգում հաշվետվությունների որակի և վիճակագրական ցուցանիշների բարելավման նպատակով մշակել երկքաղաքացիների և օտարերկրացիների հաշվառման համակարգ՝ ռեգիստր, համալրելով ՍԷԿՏ համակարգով օտարերկրացիների մուտք/ելքերի տվյալները ՀՀ ԱԳՆ, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ ԱԱՀՆ, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական համակարգերի օտարերկրացիներին վերաբերվող տվյալներով:	ՍԷԿՏ համակարգի ՀՀ մուտք/ելք տվյալների հիման վրա երկքաղաքացիների ռեգիստրի ձևավորում՝ առանձնացնելով ՀՀ քաղաքացիությունը որպես առաջին կամ երկրորդ քաղաքացիություն: ՍԷԿՏ համակարգի ՀՀ մուտք/ելք կատարած օտարերկրացիների տվյալների հիման վրա ռեգիստրի ձևավորում՝ ՍԷԿՏ համակարգի տվյալները համալրելով այլ գերատեսչությունների տեղեկատվական	Բարելավել ՍԷԿՏ և այլ գերատեսչությունների տեղեկատվական համակարգերի գործակցում միմյանց հետ:	2017-2021	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

		<p>աղբյուրներով՝ ՀՀ ԱԳՆ-ի կողմից օտարերկրյա քաղաքացիներին դիվանագիտական կարգավիճակի տրամադրման վերաբերյալ, ՀՀ արդարադատության նախարարությունից ամուսնությունների/ ամուսնալուծությունների, ծննդյան, մահվան վկայականների, դատվածության վերաբերյալ տեղեկություններով, ինչպես նաև գույքի գրանցման կամ ձեռք բերման վերաբերյալ տեղեկատվություն ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից, ՀՀ ոստիկանության ԱՎՎ բնակչության ռեգիստրից, Ճանապարհային ոստիկանությունից, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից, ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:</p>				
<p>2.10.</p>	<p>ՍԷԿՏ համակարգով սահմանային գրանցման որակի բարելավման և ՀՀ փաստաթղթերի իսկությունը ստուգելու նպատակով գրանցման պահին տվյալ փաստաթուղթը՝ ՀՀ ԱԳՆ կողմից տրված համապատասխան փաստաթղթերը ՀՀ ԿԱ ոստիկանության ԱՎՎ անձնագրային տեղեկատվական համակարգերի հետ համեմատելու հնարավորության ապահովում:</p>	<p>Սահմանային վերահսկողության ընթացքում ստուգել ՀՀ փաստաթղթերի իսկությունը՝ փաստաթղթի տվյալները համադրելով ԱՎՎ անձնագրային համակարգի, ԱԳՆ-ի վերադարձի վկայականների, դիվանագիտական փաստաթղթերի տվյալներ հետ: Սահմանահատող անձանց տվյալները համադրել ՀՀ բնակչության, երկքաղաքացիների և օտարերկրացիների ռեգիստրի տվյալների հետ: Լրամշակված հաշվետվությունների և</p>	<p>Բարելավել ՍԷԿՏ և այլ գերատեսչությունների տեղեկատվական համակարգերի գործակցում միմյանց հետ:</p>	<p>2017-2021</p>	<p>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>

		վիճակագրությունների ծրագրային ձևեր:				
